Խմբային դիմումներ և մեծաթիվ դիմողներ

Եթե դիմողը կամ ներկայացուցիչը գանգատներ է ներկայացնում երկու կամ ավել դիմողների անունից, ում դիմումները հիմնված են տարբեր փաստերի վրա, ապա յուրաքանչյուր դիմողի համար հարկավոր է լրացնել առանձին դիմումի ձևաթուղթ՝ տրամադրելով պահաջվող ամբողջ տեղեկատվությունը: Յուրաքանչյուր դիմողի գործին վերաբերող փաստաթղթերը նույնպես պետք է կցվեն այդ անհատի դիմումի ձևաթղթին:

Հինգից ավել դիմողների առկայության դեպքում, ի լրումս դիմումի ձևաթղթերի ու փաստաթղթերի, դիմողների ներկայացուցիչը պետք է նաև ուղարկի դիմողների անձնական տվյալներով լրացված աղյուսակ: Եթե ներկայացուցիչը փաստաբան է, ապա վերոնշյալ աղյուսակը պետք է ներկայացվի նաև էլեկտրոնային տարբերակով (սկավառակի կամ հիշողության քարտի վրա):

- Table (English version)
- Table (French version)

Եթե ներկայացուցիչը փաստաբան է, ապա վերոնշյալ աղյուսակը պետք է ներկայացվի նաև էլեկտրոնային տարբերակով (սկավառակի կամ հիշողության քարտի վրա):

Դիմողների կամ դիմումների առավել մեծ քանակի դեպքում, Դատարանի քարտուղարությունը դիմողներից կամ նրանց ներկայացուցիչներից կարող է պահանջել գրավոր նյութերն ու փաստաթղթերը ներկայացնել նաև էլեկտրոնային կամ այլ տարբերակով: Քարտուղարությունը կարող է տալ այլ ցուցումներ՝ տվյալ դիմումներն արագ և արդյունավետ գրանցելու համար պահանջվող հետագա քայլերի մասին:

Մեծաթիվ դիմողների անունից դիմումներ կամ խմբային դիմումներ ներկայացնելու ձևի կամ ընթացակարգի վերաբերյալ Դատարանի քարտուղարության կողմից տրված ցուցումներին չհետևելը կարող է հանգեցնել տվյալ գործերը Դատարանի քննությանը չհանձնելուն (տե՛ս Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածի 5.2 կետը):

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME